

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. ԿՐՈՎԻՑԿԻՅ

91

18939

Հ Յ Ւ Ե
ՄՈԴՐԸ

Տ Ե Ր Ա Խ



3

327.3
4-87

ԳԻՆԸ 17 ԿՈՓ.
Цена 17 коп.

ՀՐԱՄԱԿՎՈՂՔՈՒՆ «ԶՅՈՒԽԱՎԵՐՆ ԿՈՎԿԱՍ»
1932 ԹԱՎՈՒՆ-ԴՐԱՆ

327.3
4-87

Ի՞նչ Ե ՄՈՊՐԸ


4. ՐԴ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ
ԹԱՐԳՄԱՆԵՑ ՅԵՎ ՎԵՐԱՄՏԱԿԵՑ Հ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ի՞նչ Ե ՄՈՊՐԸ

Դեռ վոչ բոլոր բանվորներին ու գյուղացիներին պարզ է, թե միջազգային պրոլետարական հեղափոխության պայքարում ինչպիսի մեծ քաղաքական դեր ե կատարում ՄՈՊՐԸ:

Խորհրդային Միության խուլ անկյուններում կան դեռ այնպիսիները, վորոնք չգիտեն, թե ինչո՞ւ յե պետք ՄՈՊՐԸ, և նույնիսկ այդ բառի խակական նշանակությունն ել չգիտեն ներկա գրքույկի նպատակն ե բանվորներին և գյուղացիներին բացատրել և պարզաբանել ՄՈՊՐ-ի հիմնական խնդիրները և դրանով քաղաքի և գյուղի աշխատավորական մասսաների նոր շերտեր գրավել միջազգային պրոլետարական համերաշխության դրոշների տակ: Չորս տասով նշանակված «ՄՈՊՐ» կրծատված բառը նշանակում ե՝ «Մեծողութարողնայա ուզանիցիա պամուջի բորցամ Ռեվոլյուցիի» (հեղափոխության մատիկների ոգնության միջազգային կազմակերպություն):

Դա մի կազմակերպություն ե, վորի մեջ միացել են ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները, դա պրոլետարիատի, աշխատավոր գյուղացիության և գաղութների աշխատավորների մարտական դասակարգային կազմակերպությունն ե, վորը ստեղծված ե բուրժուական բանտերում տառապող հեղափոխական մարտիկներին և ծանր կարիքի մեջ մնացած նրանց ընտանիքներին նյութական և բարոյական յոգնություն ցույց տալու համար: ՄՈՊՐ-ը, ողնելով կապիտալի բանտարկյաներին, պահպանում ե նրանց ուժերը հանուն համաշխարհային հեղափոխության, բուրժուաների դեմ գալիք վճռական կոիվների համար և այդպիսով պատրաստում հեղափոխության վերջնական համեմատիկը:

3301
Կ1

24.05.2013

18939

ԻՆՉՊԵՍ Ե ԱՊՐՈՒՄ ԱՅԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱ- ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՄՈՊՐ-ի կազմակերպության՝ կարիքը չեր լինի, յեթե չիներ կապիտալիզմը, յեթե չիներ մարդու շահագործումը մարդու կողմից, յեթե ամբողջ աշխարհն իրանից ներկայացներ աշխատավոր մասսաների մի ընդհանուր ազատ սոցիալիստական հասարակություն։ Բայց դեռ այդ չունենք։ Ամբողջ յերկրագնդի վրա բացի Խորհրդային Միությունից, դեռ գոյություն ունի կապիտալիստական հասարակակարգ, վորտեղ կաև վածատերերը, գործարանատերերը և բանկիրները ճնշում են ժողովրդի մեծամասնությունը և հարստանում ի հաշիվ բանվորների և գյուղացիների շահագործման։

Յերբ Խորհրդային Միության հաղթական պրոլետարիատը հաջողությամբ առաջ և տանում սոցիալիստական շինարարությունը և բարեկավում բանվոր գասակարգի և գյուղացիության տնտեսական և կուլտուրական դրությունը, այնտեղ, արտասահմանում, արևմուտքում և արևելքում, կատարվում և բոլորովին հակառակը։

Յերբ ամբողջ ԽՍՀՄ-ում գնում և սոցիալիզմի կառուցման յեռուն աշխատանքը, միևնույն ժամանակ կապիտալի բոլոր յերկրներում առաջ և գալիս կապիտալիստական տնտեսությունը քայլայող և աշխատավոր զանգվածների աղքատացումն ուժեղացնող չտեսնաված տագնապը (կրիզիս)։

Դեռ կուսակցության 16-րդ համագումարում ընկեր Ստալինը ասել է. «Նրանց, կապիտալիստների մոտ, ինչպես արդյունաբերության, այնպես ել գյուղատնտեսության բնագավառներում տնտեսական կրիզիս և արտադրության անկում, մեղ մոտ, ԽՍՀՄ-ում, տնտեսական վերելք և արտադրության աճում ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։

Վերջին ժամանակների փաստերը լիովին հաստատում են ընկեր Ստալինի ասածները. ԽՍՀՄ-ում, կուսակցության գըլ-խավոր գծի հիման վրա, աջ և «ձախ» ողորտունիստների հետ

պայքարում, հաջողվեց հսկայական հաջողությունների հասնելու Մեղնում, ԽՍՀՄ-ում, արդյունաբերական արտադրանքը, համեմատած նախապատերազմյան ըրջանի հետ, անել ե յերկու անգամ։ Վերակառուցվում են հին գործարաններն և ֆարբեկանները, կառուցվում են, վոմանք արդեն կառուցվել են, արդյունաբերության խոշորագույն հսկանները, ինչպես՝ Ստալին գրատի տրակտորի, Խարկովի տրակտորի, Մագնիտոգորսկի, Կուզնեցկուստրոյ, Դնեպրոստրոյ, Նիժեգորոդյան գվառոյի և այլ նման գործարանները։ 1931 թվի ընթացքում, աշխատանքի անցնելիք 518 նոր գործարանների և 1040 մեքենա-տրակտորային կայանների ծրագիրը մեծագույն մասով արդեն կառարկած է, կարճ ժամանակամիջոցում, և մենք և հասնում ենք, խոկ արտադրության առանձին ճյուղերում արդեն անցել ենք կապիտալիստական առաջավոր յերկրներից և մոտակա 10 տարում հաստատապես կանցնենք նրանցից։

Կապիտալիստական յերկրներում կրնավում և արտադրությունը, նվազում և առևերի ըրջանառությունը, կանգ և առնում տնտեսական կյանքը, Ուրինակ, Ստերիկայի նման ավելի ուժեղ կապիտալիստական յերկրում, 1930 թվի ընթացքում պողպատի, արտադրությունը կրճատվել և 36 տոկոսով, չուգունի՝ 41 տոկոսով, հանքը ածուխի՝ 22 տոկոսով։ Ավտոմոբիլների արտադրությունը կրճատվել և կիսով, տեքստիլ գործարաններին բամբակի մատակարարումը կրճատվել և 34 տոկոս։ Ուրիշ յերկրների հետ առևտուրը կրճատվել և 37%-ով։

Ավելի վատ և կապիտալիստների գործը Գերմանիայում։ Այնտեղ պողպատի արտադրությունն ընկել և 43 տոկոսով, չուգունի՝ 44 տոկոսով, հանքածուխի՝ 17 տոկոսով։ Մի արքա ընթացքում կրճատվել և ամբողջ արտադրության մի յերրորդ մասը (32 տոկոս)։

Ամբողջ կապիտալիստական աշխարհը տանջվում և կրիզիսի ճանկերում և փորձում և բանվոր դասակարգի ճնշման և ԽՍՀՄ գեմ ավազակային պատերազմի պատրաստության միջոցով յելք գտնել այդ գրությունից դուրս դալու, վոր այգափխով, մեր հաշվին, փառը և մեռնող կապիտալիզմը կարողա-

նա կազդուրվել: Վերջին ժամանակների չին-ճապոնական կոն-
ֆլիքտը լավագույն ապացույցն ե մեր արտահայտած մտքի:
Ճապոնական իմպերիալիզմը, ոպտվելով յեվրոպական այլ պե-
տությունների շեզոքությունն-ից, իսկ մի քանիսների նույ-
նիսկ քաջալերությամբ և ոժանդակությամբ, ներխուժել և Զի-
նաստան (Նախ Մանժուրիա, իսկ հետզինետե ալելի առաջ՝
Շանհայ, Նանկին և այլն), նպատակ ունենալով հսկայական
Զինաստանը, նրա բնական հարստություններով, դարձնել ի-
րա գաղութը: «Զինայտարարված» պատերազմը, ուազմական
տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, կուլ և տալիս տասնյակ
և հարյուր հազարավոր մարդկային դոհեր, ավերակների կույ-
տի վերածելով հսկա ինդուստրիալ քաղաքներ, ճապոնական
իմպերիալիզմը և կապիտալիզմը տարածում ե իրա «կուլտու-
րան» «անկուլտուրական» 400 միլիոնանոց չին աշխատավոր ժո-
ղովրդի վրա: Առիթից ողավելով, յեվրոպական և ամերիկյան
կապիտալիզմն ել ջանքեր ե թափում թալանից իրա բաժինը
վերցնելու, միենույն ժամանակի հնարավորություն և տալիս,
ԽՍՀՄ հարավ-արևելյան սահմաններում, իր դիվային ծրա-
գրի (ԽՍՀՄ. դեմ պատերազմի) կատարման համար մի ուժեղ
զինակից ունենալու:

Մեղնում, ԽՍՀՄ-ում, վերացված ե զարծագրկուրյունը, մեղ
ընդհակառակը, չի բավաւմ բանվորական ուժը՝ 1931 թվին ար-
դյունաբերության սեղ գրավված են 2 միլիոն բանվորներ,
իսկ 1932 թվի ընթացքում հարկավոր են 1 միլ. 200 հաղար
ևս, յերբ կապիտալիստական յերկրներում զուծագրկուրյունը
հասել է չեղած չափերի: Ամերիկայում այժմ հաշվում ե մոտ 12
միլիոն գործազուրկ: Դերմանիայում, վերջին տարվա ընթաց-
քում գործազուրկների, թիվը ավելացել է 1 միլիոն 430 հաղա-
րով և ընդամենը հաշվում 4-ից 5 միլիոն գործազուրկ: Անդիւ-
յում 2 միլիոն 600 հաղար գործազուրկներ և այլն: Կապիտա-
լիստական յերկրներում ընդամենը կան 25 միլիոն գործազուրկներ,
վարոնց ընտանիքներու քափառը այլ սովոր յեն մատնված:

Իրա հետ միասին կրծատվում ե նաև գործազուրկներին
արվելիք նպատակը: Ամերիկայում բուրժուազիան ըոլորովին

մերժում ե գործազուրկներին պետական ոգնություն տալ,
Դերմանիայում և Անգլիայում նպաստից զրկվում են բանվո-
րական յերիտասարդությունը, ամուսնացած բանվորուհիները
և բոլոր կառուցող բանվորները: Այստեղ նվազաւմ ե բանվոր-
ների սոցիալական ապահովագրումը, յերբ ԽՍՀՄ-ում, չնայած
գործազրկության վերացման, սոցիալական ապահովագրության
(հաշմանդամների կենսաթոշակը, հիվանդներին նպաստ և այլն)
ֆոնդը տարեց-տարի անում ե:

ԽՍՀՄ-ում առաջանում ե բանվոր դասակարգի նյութա-
կան պայմանների անշեղ բարեկավումը: Դեռ 1929 թվին, հա-
մեմատած նախապատերազմյան շրջանի հետ, աշխատավարձն
արդին հասել եր 167 տոկոսի: Միայն վերջին յերկու տարինե-
րում նա ավելացել է 12 տոկոսով: 1931 թվին աշխատավարձի
ֆոնդը համեմատած նախորդ (1930 թ.) տարվան հետ, աճել է
16 տոկոս: Մեր կուսակցությունը ԽՍՀՄ բանվորների նյու-
թական-կենցաղային և կուլտուրական պայմանների բարե-
լավման հարցը գրել ե վորպես մարտական կարևորագույն
հարց:

Կապիտալիստական յերկրներու կրիզիսը պրոլետարիա-
տին բերում ե աշխատավարձի խիս կրնաւում: Ամերիկյան
Միացյալ Նահանգներում 1930 տարվա ընթացքում աշխատա-
վարձի գումարը նվազել է 12 միլիարդ դոլարով: Աշխատանքի
մինիստրության հենց իր տվյալների համաձայն, աշխատավար-
ձը 1926 թվի վերաբերմաբ կազմում ե միայն 67 տոկոս: Դեր
մանիայում, կապիտալիստների վաչ լրիվ տվյալների համաձայն,
տեքստիլ բանվորների աշխատավարձն իջել է կեսի, յերկա-
թուղայինների և պողպատի արդյունաբերության բանվորնե-
րի գործավարձը (սեղանա արածություն) իջել է մի (յերրորդի:
կեսաստանում, վորտեղ առանց այդ ել աշխատավարձը ցածր
եր, վորոշ արտադրություններում իջեցումը հասնում է կեսի:

Բանվորուհիների կյանքի պայմանները ավելի ծանր են:
Դերմանիայում կանայք աշխատում են 10—12 ժամ, Զինաս-
տանում 12-14 ժամ, Ֆրանսիայում՝ 10 ժամ, Լեհաստանում՝
10-14 ժամ և այլն: Ավելի վատ ե գրությունը Բոլղարիայում,

Թումինիայում և Հարավ-Սլավիայում: Մի շաբք յերկրներում կանանց որպարձը 40-45 կողեկից չի անցնում:

Այժմ, յերբ ԽՍՀՄ արդյունաբերության մեջ՝ 7 ժամյա աշխատանքի որը անց և կացվել դրեթե բոլոր կապիտալիստական յերկրներում 8 ժամյա աշխատանքային որը նույնիսկ դոյսություն չունի:

Արդյունաբերության մեջ առաջացող ռացիոնալիզացիան և ամբողջ կապիտալիստական տնտեսության մեջ անվերջ կը փակները առաջ են բերում բանվորների և բանվորութիւնների շահագործման անընդհատ աճում:

Բուրժուազիայի հարստության, վոսկու և փարթամության ներ միասին, պրոլետարը և նրա ընտանիքը տառապում են խոնավ ներքնանաներում, ընկած են փողոցներում և սովորական մեռնում են: Իսկ յեթե դրան ավելացնենք վոստիկանական ձնումը և աշխատավորության լիակատար իրավադիկությունը, պարզ կլինի, թե ինչու յե որվում բանվորների և գյուղացիների պայքարն իրենց դասակարգային թշնամու բուրժուազիայի դեմ:

Վերջին տարիներում Անդիայում ունենք ընդհանուր գործադրու կենտրոնական Յեվլոպայում անընդհատ գործադրուներ, հեղափոխական շարժման լայն ալիքները Զինաստանում, 1927 թվին Վեննայում հովհայան ապահարությունը, գյուղացիական շարժման ուժեղացումը Բալկաններում և ուրիշ նման դեպքեր, վորոնք ապացույց են Արեմուաքում և Արեմելքում հեղափոխական շարժման աճման: Պատահական չե, վոր Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը ռայխստագիւղին ընտրությունների ժամանակ ստացավ 4 և կես միլիոնից ավելի ձայն, այսինքն 1 միլիոն 300 հազար ավելի, քան անցյալ ընտրություններին:

Նույնիսկ կապիտալիստական այն յերկրներում, վորուեղ վերջին տարիներում գործադրուային շարժման աճում չեր նըկատվում, այդ գործադրուները հաճախակի յեն դառնում և մեծ քաղաքական նշանակություն են ստանում, պայքարելով վոչ միայն բանվորների վորոշ տնտեսական պահանջների բա-

վարարման համար (աշխատավարձի ավելացումը, աշխատանքային որվա կրծատումը), այլ և ամբողջ բուրժուական պետության դեմ:

Որինակ՝ գործադրության շարժումը կենաստանում, Ռումինիայում, Չեխո-Սլավիկիայում, մի շաբք դեպքերում փոխվում եր վոստիկանության դեմ զինված կատաղի հեղափոխական կոհիմեների:

Ավելի լավ չե գյուղացիության գրությունը կապիտալիստական յերկրներում աշխատավոր գյուղացիությունը ավելի և ավելի աղքատանում և քայլացիությունը է: Ամերիկայում կա 1 միլիոն տրակտոր, բայց գյուղացիության չորս հինգերորդ մասը (հարյուրից ութսունը) չունի տրակտոր: Կապիտալիստները կենտրոնացրել են իրենց ձեռքում ցորենի հսկայական պաշարներ (Յանաչ, Հնայած վոր տասնյակ միլիոնավոր սոված մարդիկ կան, վաճառելու տեղ չունին: Որդյունքն յեղավայր, վոր տմերիկյան կապիտալիստները, վորպեսզի կարողան գները բարձրացնել և պաշարների վաճառքը ուժեղացնել կոչ արին գյուղացիներին կրծատելու ցարենի գարեանցանը 10 տոկոսով և բամբակի՝ 13 տոկոսով: Նույն Ամերիկայում ցորենն ու յեգիպտացորենը գործածվում են վորպես վառելանյութ: Բրազիլայում մեծ քանակությամբ սուրճ ծովն և թափվում: Անդիայում և Հոլանդիայում մեծ կամպանիա յե տարվում կառուզուկի հայթյութը սահմանափակելու համար: Կուրա կղզում սահմանափակում են շաքարեղեղի արտադրանքը: Բացի դրանից, բուրժուական գիտնականներն աշխատում են շաքարի ավելի մեծ տոկոսը շաքարի մնացորդների մեջ թողներու հարցի վրա և այլն, վորովիետե արտադրվող արդյունաբերական ապրանքներն և գյուղատնտեսական արտադրությունները լրիվ չեն ծախվում, չնայած վոր գործարանները չեն բեռնավորված, իսկ ցանքսի դաշտերը նույնիսկ կրծատվում են: Բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունն այն աստիճանի յե աղքատացել, վոր իրեն ամենաներաֆեշտ իրերը գներու հնարավորություն չունի: Այդ ապրանքները մնում են չվաճառված, կրծատվում ե՝ ամբողջ ար-

տաղբությունը, աճում և գործազրկությունը, իջեցվում և աշխատավարձը, քայլքայլում և չքալոր և միջակ գյուղացին:

Ահա թե վորտեղ և հասցնում զյուղանետսուրյան զարգացման կապիտալիստական ուղին: Մեղնում, ԽՍՀՄ-ում, կոլեկտիվացման հիման վրա մի գարնանացանով ցանքսի տարածությունը ավելացավ 10 միլիոն հեկտարով, իսկ մենք պիտի կառուցենք նոր խորհանտեսություններ և կոլտնտեսություններ, ավելի պիտի լայնացնենք ցանքսի տարածությունները և ավելացնենք արդյունաբերական արտադրանքը, վորովհետեւ մեր պայմաններում աշխատավոր դանդանական կուլտուրական և նյութական կարիքները այնքան արագ են մեծանում, վոր մեր աճող արդյունաբերությունը չի կարողանում այդ կարիքներին լրիվ բավարարություն տալ:

«Գերմանական ժողովուրդը պետք է օստ աօխատել յեվ ֆիշ սովորի» հայտարարել ե վերջերս գերմանական Շխոչորագույն ածխային բարոն Զիլյերբերգի ընդունությունը: «Իտալացի ժողովուրդը, բարեբաղդաբար, սովոր չե ունեկան մի հանի անգամ ուտել, դրանամար ել կրիզիսներն ափելի հետևուրյանք կտանի», վերջերս մխիթարում եր իրեն Մուսսոլինին:

Ահա թե ինչի վրա յեն հույս դնում կապիտալիստները՝ Նրանք զայրանուռ են, վոր «Ժողովրդի հանգել են հանգուց նական վորումն» կաւը ուտելու», ինչպես ասել ե բուրժուական դիտունական Զոմբրարտը: Նրանք փորձում են ժողովրդի սովի վրա հիմնել իրենց բարորությունը: Ահա թե ինչու դոյություն ունի Շականց, կապիտալիստների մոտ, աշխատավորության նյութական պայմանների վատթարացումը, բանվորների աշխատավարձի նվազումն և գործազրկության աճումը: Մեղ մոտ, աշխատավորության նյութական պայմանների բարձրացում, բանվորների աշխատավարձի ավելում և գործազրկության կրծատում: Ահա թե ինչու դոյություն ունի Բարանց, կապիտալիստների մոտ՝ ներքին դրության սրամ և բանվոր դասակարգի կապիտալիստական ուեժիմի դեմ հեղափոխական շարժման աճումը» (Մտալին):

Վերջին ժամանակներս աշխատավորության կապիտալիստաների կողմից ճնշումը հասել ե չտեսնված չափերի: Արժեք մեջայն նշել գերմանական կառավարության կողմից հրատարակված նոր արտակարգ որենքը: Կամենալով ամրացնել իր Փենասական գործերը և սնանկությունից փրկել բանկերը, գերմանական կառավարությունն աշխատավորության վրա յեղբեկ մի նոր լուծ՝ զանազան հարկեր 1 միլիարդ 700 միլիոնի չափով: Բացի դրանից, ինայողական գանձարկղից չեն բաց թողնում մուծած գումարները, չեն վճարում աշխատավարձը և այլն:

Վախենալով, վոր գերմանական կապիտալիզմի վիակատար սնանկությունը կարող ե զրկել Հ.Ա.Մ. Նահանգներին և այլ կապիտալիստական յերկրներին Գերմանիայի այն հոկայական հատուցումների ստանալու հնարավորությունից, վորոնք համաշխարհային պատերազմից հետո փաթաթեցին նրա վիճն, այժմ Հ.Ա.Մ. Նահանգները հանձինս նախադահ Հուվերի առաջարկություն են մտցրել մի տարով Գերմանիայի հատուցումների վճարումը հետաձգելու Բայց Հուվերը այս առաջարկությունը ցույց ե տալիս, թե ինչքան ուժեղ կերպով ե կրիզիսը տիրել կապիտալիստական բոլոր յերկրներին և ինչքան սուր և պայքարը կապիտալիստների միջև: Այս առաջարկությունը մտցնելով, Հ.Ա.Մ. Նահանգները չեն հրաժարվում, այլ պնդում են բոլոր պատերազմական պարտքերն իրեն վճարելու մասին:

Ֆրանսիան ամեն կերպ ջանք ե թափում Գերմանիային սարկացնող Յունգի պահանակերու և ոդուվելով նրա ծանրը դրությունից, Ներկայացնել Գերմանիային այնպիսի պայմաններ, վորոնք դարձնելուն նրան քրանսիական կապիտալիզմի կիսագաղութային մի յերկիր: Գերմանիան իր կողմից պաշտպանում ե զրահանավերի հետագա կառուցման իրա իրավունքը, վորոնց ոգնությամբ նա հույս ունի մի անդամ և ա Ֆրանսիայի հետ հաշիվ տեսնել: Անդին պայքարում ե Ամերիկայի Միացիալ Նահանգների կապիտալիստական աշխարհի տիրապետության ձեռնամուխ լինելու դեմ, ճիշտ այնպես, ինչպես Ֆրանսիան ուզում ե լիակատար հնարավորություն

ստանալ Յեվրոպայի բոլոր գործերը տնօրինելու Ռւայսպես և խճճվում կապիտալիստական հակասությունների կապը, վորոր պիտի փորձեն փակել նոր պատերազմով, և սահավանդ պատերազմով իր դասակարգային թշնամու—ԽՍՀՄ-ի դեմ:

Կապիտալիստական աշխարհի դրության պատկերը լիուկտութների աշխատավորական զանգվածների դրությունը: Այնառեղ բանվոր դասակարգը բոլորովին անպաշտպանէն է: Պահանջմաներում սպիտակ կորոնիզատորերի կողմից լայնորեն գործ է ածվում շղթայակապ անելը, ծեծելը, չներով հալածելը, պըլանտացիայի հողամասը պատող փոշոտ ցանկապատի սահմաններից բանվորների անցնելն արգելվը և այլն: (Կոմինտերնի Քործադիր Կոմիտեի Խ-րդ պլենումում ընկեր Մանուկիսկու պեկուցումից):

Իսկապես առանձին դժվարին դրության մեջ և գտնվում չնդիմատանի, Զինաստանի, Խնդոնեղիայի, Հնդկաչինի և այլն յերկրների աշխատավորությունը: Զինացի բանվորի չինացի դրծարանատերերից շահագործման վրա անելանում և ոտարյերկյա, Զինաստանում ֆաստորեն իշխող, կապիտալիստների շահագործումն և ճնշումը, վերջին հաշվով չինացի կուլին (սեփագործ բանվորը) իր ամբողջ կյանքում տառապում և սովից, թշվառությունից և նվաստանալուց: Ավելի լավ չե նաև չինական դյուզացու դրությունը: Նա հող չունի, նա աշխատում է դեներալ—կալվածատերերի համար և ֆաստորեն նա գետ կիսում է: Զինական գյուղացիության կեսը ստիպված է հողը վարձել կարվածատերից: Գյուղացիությունից տարեկան 5—10 անդամ հարկ են հավաքում, իսկ մի քանի այլ գավառներում 8—10 տարվա համար հարկը կանխիկ գանձված է:

Մասսաների դրությունը գյուղում հասել է ծայր աստիճանի: Յերրորդ տարին ե, վոր Զինաստանի զգալի մասում սովոր շարունակվում ե, 1930 թվին Զինաստանում հաշվում երմու 57 միլիոն սովյաներ:

Զինական բանվորների և դյուզացիների շքավորությունը լրացվում է նրանց լիակատար իրավագրկությամբ: Ոտար-

յերկրյա կապիտալիստների նշավակումը հասել է իր գագաթնակետին: Անգլիական վոստիկանի մտրակը անխնա իջնում և անհնաղանդ չինացի կուլիի մեջքին: Անգլիական գատարանը անհնաղանդների հետ անխնա կերպով և վարդում, իսկ անգլիական զրբերը քար ու քանդ են անում չինական ապատամբ գյուղերն ու քաղաքները:

Անա թե ինչու չորս հարյուր միլիոնանոց չինացի ժողովուրդը ավելի համարձակորեն և զլուխ բարձրացնում և չնայած ծանր կորուսաներին և անհաջողություններին, չի դադարեցնում և չի դադարեցնելու հեղափոխական պայքարը: Լավ զինված կապիտալիստների գեմ և գուրս գալիս չին բանվորն ու գյուղացին, ունինալով արգեն իր կաղմակերպված կարսիր բանակը: 60 միլիոն բնակչությամբ 127 դավաններում արդեն հայտարարված և խորհրդացին իշխանություն: Զինական պրոլետարիատի պայքարը շարունակվում է: Դրա համար կուտակվել ե բավական չափով անվեհերություն, տոկունություն և անսասան հավատք:

Շատ ծանր պայմաններում են գտնվում նաև ուրիշ ճնշված գաղութային ժողովուրդներ: Հենց գրա համար ել ապամբությունների ալիքներն անցան Մարոկկոյի, Սուրիայի, Խնդոնեղիայի և Հնդկաչինի վրայով:

Յերկրագնդի բոլոր մասերում մեծանում է հեղափոխական ալիքի նոր վերելքը, ձախանում և արեվմուտքում բանվոր դասակարգը և չտեսնված չափերով զարգանում և աղքացին աղատագրական շարժումն արեվելքում: Աշխարհի կեղեքված և շահագործվող ժողովուրդներն ավելի համարձակորեն են ձգտում գնալու համաշխարհային Հոկտեմբերի ուղիով:

Մեր կուսակցության 16-րդ համագումարը լիովին արդարացի գուրս յեկավ, յերբ ցույց տվեց, թե համաշխարհային տնտեսական կրիզիսը «կապիտալիստական և գաղութային յերկրներում ուժեղացնում է հեղափոխական վերելքը և անխուսափելիորեն մի շարք յերկրներում պիտի փոխվի քաղաքական կրիզիսի»...

Դրա մասին խոսում են բազմաթիվ փաստեր. Ռուբի (Գերմանիա) հսկայական գործադրությունը, Լոձի (Լեհաստան) ընդհանուր գործադրությունը, Ֆրանսիայի մանածագործների գործադրությին հսկա ալիքը, Զեխո-Սլավակիայի գյուղատնտեսական բան գորների, Բուքեյի (Հնդկաստանի) տեքստիլ բանվորների գործադրությունները, պրոլետարիատի մայիս-միկյան փառավոր ցույցերը, պրոլետարիատի մարտի 6-ի ցույցը գործադրկության դեմ, ոգոստոսի մեկի հակապատերադմյան և ԽՍՀՄ պաշտպանության համար համաշխարհային պրոլետարիատի անուելի ցույցերը:

Կերջապես, հեղափոխությունը իսովանիայում մի թաղավորական թագ յեկա գլորեց և բանվորա-գյուղացիական զանգվածներին խորհրդների համար պայքարի հանունց: Մենք այժմ վկա յենք հանդիսանում, թե ինչպես և հեղափոխությունը ցնցում իսպանիայում, թե ինչպես և խորանում հեղափոխական կրիպիսը Զինաստանում, Հնդկաստանում, թե ինչպես են հասունանում վճռական կորիները Գերմանիայում և Լեհաստանում:

ԽՍՀՄ-ի գոյությունը և սոցիալիստական շինարարության հաջողությունները պայքարող պրոլետարիատի և գյուղացիության շարքերում յեռանդ և կապիտալիստների մեջ կատաղի վոխակալություն են առաջացնում: Մեր հաջողությունները մահացող կապիտալիզմի լուծումն են ուժեղացնում, վորը ամեն միջոցներով աշխատում և խանգարել սոցիալիզմի կառուցումը: Կապիտալիստներին փորձեցին ոգնել նաև մեր ներքին թշնամիներ՝ կուլակներն ու վնասարարները, վորոնք չեն կարողանում հաշտվել, վոր մեղնում իշխանությունը դանվում է պրոլետարիատի ձեռքին:

Այն ուժեղ հարվածը, վոր մենք հասցըինք վնասարարներին և կապիտալիստական վերջին դասակարգի՝ կուլակության վերացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա, ավելի և ամրացըին ԽՍՀՄ-ը և ավելի մեծ շիոթություն առաջ բերին կապիտալիստական յերկրների բանակում: Այդ շփոթությունն արտահայտել ե գրանսիական մինիստր Բիհանը, յերբ

1931 թվի հունվարի 24-ին Ժնեվում ասել ե. «Մտածեք այն խլոտումների մասին, վորոնք կարող ե առաջացնել Խորհրդային հնգամյա պլանը, Լեհաստանի և Ռումինիայի նման յերկրներում, վորոնք ուսեն չծախված հացի պաշարներ և վորոնց զյուղացիներին քայլացիում ե վաշխառուն: Բոլենվիզմը կարող է արագ կերպով գրավել բոլոր յերկները... Դրա համար հարկավոր ե արեգելյան Յեվրոպայի փոքր պրարային յերկրներին ողնել վորպեսզի նըանք կարողանան դիմադրել բոլցեվիզմին»:

Լեհաստանին և Ռումինիային ի՞նչպիսի ոգնության մտասին ե խոսում Բրիանը, պարզ ե յուրաքանչյուր բանվորին գյուղացուն: Դա զենքի ոգնությունն և ԽՍՀՄ-ի դեմ պայքարելու և իրենց յերկրի հեղափոխական աշխատավորական զանգվածներին խեղդելու համար:

Բայց, հեղափոխականների դեմ սպիտակ տերրորով և ԽՍՀՄ-ի ռազմական յեռութների նախապատրաստությամբ կապիտալիզմը յերկար չե կարող դիմանալ: Հեղափոխական շարժման աճող ալիքը վերջ կտա կապիտալիզմին, և համաշխարհային պրոլետարիատի կենինյան կոմիստերնի ղեկավարությամբ կհետեւ համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադի՝ ԽՍՀՄ-ի որինակին նըանք կտապալեն վըթած և մեռնող կապիտալիզմը և դրանով հեղափոխական յելք կդաննեն կապիտալիստական կրիպիսից դուրս գալու:

ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱԲԱՆՆ Ե

Հեղափոխական շարժումը խեղդելու համար բուրժուագիւան հեղափոխական կազմակերպությունների դեմ արշավանք ե մզում: Նա զորախմբեր ե ուղարկում Զինաստան և այլ զաղութներ, նա գործադրուները արգելում ե, պրոֆմիությունների գործունեյությունը խանգարում: Նա բանվորներին խարելու համար դիմում ե ամեն միջոցի և ձգտում ե վոչնչացնել հեղափոխական պրոլետարիատի և զյուղացիության ամենալավ

Յեկեղեցին և սոցիալ-դավաճաններին, դպրոցն ու կինոն թերթերն ու գրքերը բուրժուազիան ոգտագործում եւ բանվորներին խարելու, նրանց մեջ կասկած և սուտ լուրեր տարածելու, Խորհրդային Միության դեմ վատարաներու և բանվորների դեպի իրենց կոմունիստական կուսակցությունն ունեցած հավատքը թուլացնելու համար, Բայց այդ միջոցներն այլև բավական արդյունք չեն տալիս. Խորհրդային իշխանության 14 տարվա գոյությունը՝ ԽՍՀՄ-ում շատ բան և սովորեցրել պրոլետարիատին, և նա քաղաքականապես գրագետ եւ դարձել: Խորհրդային Միություն հաճախող զանազան յերկրների բանվորական պատգամավորները շատ ճիշտ տեղեկություններ են տվել իրենց ընկերներին և ողնել նրանց դիմակազերծ անելու սոցիալ-խարբեաներին:

Բուրժուազիան իշխանությունն իր ձեռքին պահելու համար դիմում եւ վերջին միջոցին, նա ուժեղացնում է պետական քոնության փորձված միջոցների գործադրումը:

Վոստիկանության, զինվորական և ժանդարմական սպայական մասեր, դատարան և բանտ, մտրակ և զնդակ, եկեղեցական աթոռ և կախազանի ողակ, ամեն ինչ ոգտագործվում է հեղափոխական բանվորների և գյուղացիների առաջամարտիկներին վոչչացնելու համար:

Ինչքան արագ են աճում պրոլետարական հեղափոխության հաջողությունները, այնքան ուժեղանում են լուծվող բուրժուազիայի վայրագությունները. Սահեակ տերություն վոչ թե քուրժուազիայի ույժն է, այլ նրա բուլության ցուցանիքը (ուշադրություն):

Բուրժուազիան իշխանությունը ձեռքին պահելու համար դիմում եւ վերջին միջոցի՝ տերորին:

16-րդ կուսամագումարում ընկ. Մօլոտովը նշեց, թե ինչպես բանվորական ցույցերը «հարձակման են յենթարկվում ժանդարմերիայի, ֆաշիստների, սոցիալ-լակեյների կողմից և վերջանում են վոստիկանության հետ ընդհարումներով, վորի արդյունքը լինում է այն, վոր բանվորական շարքերից դուրս են պոկվում տասնյակ և հարյուրավոր զոհեր»:

Վոչ լրիվ տեղեկությունների համաձայն, Գերմանիայում միայն 1930 թվի առաջին 5 ամիսների ընթացքում վոստիկանության հետ յեղած ընդհարումների ժամանակ սպանվել են 60 բանվոր, վիրավորված՝ 1163 հոգի և ձերբակալված ավելի քան 2500 հոգի. Դա բնորոշող պատկերացումներից միմիայն մեկն եւ:

Խորհրդային Միության բոլոր բանվորներն ու գյուղացիները պետք եւ իմանան, թե բուրժուազիան ինչպիսի միջոցներով եւ ամրացնում իր իշխանությունը, և ինչպիսի տառապանքներ են տանում մեր արտասահմանի յեղայրները. Դասակարգային պայքարի պատմության եջերում հեղափոխականների արյագի գրված սարսափելի թվերն ու փաստերը պերճախոսությամբ խոսում են բուրժուազիայի գաղանությունների մասին:

Ահա, 6 տարվա (1925—1930) ընթացքում, կատաղած ժանդարմերի ձեռքով առանց դատի սպանվել խոշտանգվել են 670,901 հեղափոխականներ: Բայց դրանից, 141,253 հոգի մահվան են դատապարտվել: Բայց դա յել բոլորը չի: Բուրժուազիան բոլոր հեղափոխականներին միտնպամից չի սպանում, այլ վոմանց նա աստիճանաբար եւ մահացնում, դատապարտելով նրանց ցմահ բանտարկության վերջին 6 տարվա ընթացքում 736 նման վճիռներ են կայացրել:

Ամեն որ հարյուրավոր և հազարավոր հեղափոխականներ ձերբակալվում, խուզարկվում, հետապնդման, գաղանային տանջանքների և յերկարատև տանջանքների յեն յենթարկվում:

Այս 6 տարվա ընթացքում յեղել են 862,563 ձերբակալություններ, վիրավորների և ծեծվածների թիվը հասել է 388,714: Ինչը համար: Նրա համար, վոր նրանք դժոն են բուրժուազիայի վայրագ ուժիմից, վոր նրանց հարկավոր ե հաց, հող և աղատություն, և վերջապես, վոր նրանք ուզում են մի բուռ կապիտալիստների իշխանությունը փոխել բանվորների և գյուղացիների խուրհուրդների իշխանությամբ: Բայց ակտիվ հեղափոխականներից, բուրժուազիան հաշածում են նաև խորհրդային բանվորներին համակրողներին և կամ նրա համար, վոր

Նրանք հեղափոխականների ազգականներ և կամ բարեկամներ են, հայածում են նրա համար, վոր նա գիտակից պրոլետար կամ առաջադեմ գյուղացի յե. Նրան գործից վտարում և բնակարանից փողոց են շպրտում, «բնակարան» տրամադրում կապիտայիստական ցանցապատ բերդում և նրա ընտանիքին դըրկում հացից:

Վերջին 6 տարիներում, կապիտալիստական յերկրներում յեղել և 18 հազար դատավարություն, վորով մեղադրյալները դատավարություն ընդհանուր գումարով 109,702 տարով տաժանակիր աշխատանքի: Այս տեղեկություններն առնված են բուրժուական թերթերից, վորոնք իհարկե լրիվ չեն, նրանք սպազեցրած են:

Կան մի շաբաթ Հնդկաստանի կամ Աֆրիկյան գաղութների նման յերկրներ, վորտեղ վոչ մի հնարավորություն չկա սպիտակ տերրորի գոճերի քանակը հաշվի առնել:

Այժմ բուրժուազիան հեղափոխականներին, բանտ չհասցրած, հետևաբար և դատարան չհասցրած, տեղն ու տեղը սպանելու գիծն ե տանում:

Տորեց-տարի բաղմանում են սպիտակ տերրորի գոճերը: Այս յերկու խոշորագույն յերկրներում՝ Գերմանիայում և Ամերիկայում,իրենց «ազատության», «գեմոլիրատիայի» և «կուլտուրայի» յերկրներ անվանող յերկրներում՝ յերեք տարնա ընթացքում սպիտակ տերրորի աճման մասին խիստ ցուցադրական մի աղյուսակ:

Թիվ	Գ ե ր մ ա ն ի ա			Ա մ ե ր ի կ ա		
	Զերբարկալված	Վիրափորված	Սպանված	Զերբարկալված	Վիրափորված	Սպանված
1928	1308	661	18	3567	818	29
1929	5397	1491	48	6644	1061	32
1930	17844	10137	74	6400	5812	40
1931-ի 4 ամս.	8279	4482	49	1311	345	15
(1931-ի թվերն ավելացված են թարգմանչի կողմէց)						

Այս աղյուսակից յերկում, վոր 1930 թ. սպիտակ տերրորի սանձակությունն ինչպիսի չտեսնված չափերի յե հասել, սպանված են 295,906 մարդ, վիրափորված և ծնծված՝

159,853, ձերբակալված՝ 306,744, աքսորված՝ 2879 մարդ, կատարված խուզարկություններ՝ 48,910, արգելված կազմակերպություններ և ժողովներ՝ 3641, արգելված թերթեր և գրականությունն՝ 762:

Ահա, թե ինչպես ուժեղ են «աշխատել» վոստիկանությունն ու ուսրանկան և հավատարիմ ոգնականներ՝ Փաշխաներն ու սոցիալ-Փաշխաները:

Մի տեսնենք նրանց «աշխատանքը» առանձին յերկրներում և առաջին հերթին, մեր հարևան յերկրներում: Ի՞նչպես են ապրում բանվորներն ու գյուղացիները մեր սահմանի մյուս կողմում:

Լեհաստանը ներկայացնում է իրենից համատարած բանտ հեղափոխականների և լավագույն պատսպարան բոլոր մարդասպան սպիտակ գվարդիականների համար, վորոնք մահափորձ են անում վոչ միայն լեհ ընկերների, այլև Խորհրդային Միության ներկայացուցիչների դեմ: Լեհաստանում սպանեցին ԽՍՀՄ-ի լիազոր ներկայացուցիչ ընկեր Վոյկովին, այսողող սահմանափորձ կատարեցին մեր առևտրական ներկայացուցիչ ընկեր Լիզարեկի դեմ: Լեհաստանում սպանեցին իհ հեղափոխականներ ընկ. ընկ. Բագինսկուն և Վելորկեչչին, կոմյերիտական ենգելին, այսուեղ սպանում են նաև հարյուրափոր և հազարավոր անանուն հեղափոխական մարտիկների: Լեհաստանում միայն մի 1930 թվի ընթացքում սպանել են 89 հոգի, վիրափորեկ և մասսել 8167, ձերբակալել՝ 6296 հոգի, խռովարկություններ՝ 2308 և դատավճիռ և արձակված 2920 տարվա տաժանագիր աշխատանքի: Դա նշանակում, թե 1929 թվի հետ համեմատած 49 մարդ ավելի յե սպանված, իսկ վիրափորների և մասսավաճների թիվը ավելացել ե 6742 մարդով: Պան Պիլսուդսկու ձեռք բերած հաջողությունները դրանք են:

Բայց դա յել բոլորը չի: Գեներալ Պիլսուդսկու ծառայության գրքույկում հարկավոր ե գրել մի «հաղթանակ» և հաղթանակ Արևմտյան Բելորուսիայի անզեն գյուղացիության վրա: Նա կործանելով նրանց բելորուսական բանվորագյուղացիական զրոմաղա կազմակերպությունը, մեղա-

գրյալի աթոռին նստեցրեց գրուադայի 500 անդամներին, վորոնցից 37 հոգու դատարանը դատապարտեց ընդհանուր առմամբ 209 տարվա բերդարգելության:

Այժմ պիլսուղչիկների զինվորա-վոստիկանական բանդաները կործանում են Արևմտյան Ուկրաինայի և Բելրուսիայի անհաղանդ գյուղերն ու ավանները, վորոնք կանգնում են լեռնական պաների գերության և ճնշման դեմ: Բոցերի մեջ կորչուս են ամբողջ գյուղեր և վոստիկանների մտրակների և գնդակների հարցածների տակ մեռնում են հարյուրավոր առաջավոր գյուղացիներ: Զգոհանալով լեհ բանվորներին և գյուղացիներին կողոպտելուց, չգոհանալով խորհրդային սահմաններից դուրս ավրող ուկրայնացին բելորուս բանվորների և գյուղացիների շահագործումից, լեհական զինվորականությունն ու կալվածատերերը հրով ու գնդացիրով են փորձում պահել Լեհաստանում իրենց տիրապետությունը:

Լվովի և Արևմտյան Ուկրաինայի բանտերն անընդհատ ուղարկվում են նորանոր ձերբակալվածներ: Զերբակալված ուկրաինցիների ընդհանուր թիֆը և 400—500 հոգի (1931-ի 4 ամսվա ընթացքում սպանված են 28 հոգի), վիրավորված 1098 և ձերբակալված 3900.—թարգմ. Կողմից):

Առաջվա պես բուրժուակառ Բոլղարիայում սպիտակ տերը ըրը վայրագործն շարունակում է փորձված դահիճ Յանկովի գործը: Սոփիայում հրապարակով կախված Ֆրիդմանի, Զագորսկու և Կայիկի անունները գետ չեն մոռացված: Դեռ չի չորացել 1923, 1924 և 1925 թվականներին ցանկովյան թիկնապահների ձեռքով ընկած տասնյակ հաղարավոր մարտիկների արյունը, բայց այդ սպիտակ տերը գոհերին: ավելանում են նորանոր հարյուրավոր և հաղարավոր ուրիշ գոհերի: 1930 թ. ընթացքում յեղել է 82 սպանություն և կայացված է յեղել մի մահավճիր: Բացի դրանից, վիրավորված են 5643 հոգի և ձերբակալված՝ 19418 հոգի: Դա նշանակում է, վոր 1929-ի հետ համեմատած վեղափոխականների քանակն ավելացել է 4993-ով, իսկ ձերբակալվածներին՝ 16543: Այսպիս են բոլղարական բուրժուազիայի սպիտակ տերը ու տեմպերը:

1931 թիվը Բոլղարիայի համար դարձել է նորից դժոխք, ինչպիսին ել 1923—24 թվականներին: Ապրիլ մայիս, հունիս և ողոստոս ամիսներին սպանված՝ 15, վիրավոր՝ 340, ձերբակալված 7640, աքսորված 310, խուզարկություններ 671, դատավարություն 43, մեղադրյալներ 224, դատապարտված՝ 70 հոգի 189 տարվա:

Չնայած այս բոլորին, հունիսի պարլամենտական ընտրություններին բանվորագյուղացիական բլոկը շահեց 170,000 ձայն, վորը բոլոր ընտրողական իրավունք ունեցողների (միայն 21 տարեկանից վեր աղամարդիկ) 20 տոկոսն և կազմում: Այդ հաջողությունից բուրժուական կառավարությունը շշմած, վորովց արյան մեջ խեղդել բանվորությունն ու գյուղացիությունը: Հոկտեմբերի վերջերին կազմալուծեց բոլոր պրոֆմիությունները, «բանվորական կոստակցությունը», ձերբակալեց բուրժուական բանվորներին, վակեց բոլոր բանվորական թերթերը: Այդ ժամանակամիջոցում սպանվածների և ձերբակալվածների քանակը անհայտ է, քանի վոր գեռ տերը որը վայրագործն շարունակվում է: Առաջներում «փախստի» ժամանակ սպանում ելին, իսկ հիմա ավելի նոր կատարելագործված միջոցով, ձերբակալված առաջնորդներին բանդում տանջանքների տակ սպանում, իսկ հետո ուղարկում են հիվանդանոցի մոռփան, հայտարարելով թե «անձնասպան և յեղել»: Հոկտեմբերի 30-ին, յերեկոյան ժամի 10-ին վոստիկանների ձեռքով ընկալ ընկեր Նիկոլա—Կոֆարչիենքը (Սամո), վորի մասին վոստիկանությանը հայտնի յեղել թե նա բոլղ. կոմկուսի կենտրոնի քարտուղարն է: Զերբակալվածներից մի քանի որ հետո սկսել են «անձնասպանությունները»: Պաշտոնական վոստիկանական հայտարարությունների համաձայն, բանտի իրենց խուցերում «կախվել են» կոմկուսի կենտրոնի գանձապահ Խրիստ Կոչեվ—28 տարեկան բանվոր և Յօնա Նենով, իրավաբան ուսանող, կենտրոնի աշխատակից, առաջինը «կախվել են» կոմկուսի կենտրոնի գանձապահ Խրիստ Կոչեվի պատգամավորների հանձնախումբը փնտրել և գտել «կախվածներին», վորոնք այնքան այլանդակված են յեղել վոր

գժվար և հնարավոր յեղել ճամաչել: Ընկեր Նենովի կոնսակը ծակձկված ե յեղել խորը վերքերով: Զախ ձեռքի ամբողջ մորթը քերված ե յեղել: Պարզվել է, վոր յերկուսից ել մեծամեծ կտորներ սիս են կտրել կենդանի մարմից: Զեռքերի և վոտքերի յեղունդները՝ քաշված: Մասրի կտորները կոնսակին, և վուներին կախ ընկած: Պարզ է, թե «անձնասպանությունը» ինչքան յերկար և վայրագաբար ե յեղել: Անհայտ ե ծանր վիրավոր Ռաշո—Յանովի և «Շելֆ» գեղարվեստական թերթի խմբագիր, յերիտասարդ պրոլետարական գրող Խրիստ Ռայենսկու վիճակը:

Պակաս չե նաև ոռոմինական, եստոնական և ֆինլանդական բուրժուազիան: 1925 թվին ոռոմինական ֆաշիստները մեղաղբական աթոռին նստեցրին միանգամից 500 հոգի—թաթարբունացի գյուղացիներին: Բայ եյության, դա ոռոմինական կալվածահերերի դասն եր գյուղացիության դեմ, վորոնց ամենալավ ներկայացուցիչները մինչև որս գեռ բանտում են:

1929-ի ոդոստոսի 6-ին ոռոմինական կուլակների և կապիտալիստների կառավարության հրամանով, Ժիլվագետի հովտում վոստիկանությունը գնդակահարեց 62 հանքափորի և 75-ին վիրավորեց:

Հեղափոխական շարժումից վախեցած ոռոմինական իշխանությունները, նույնիսկ յերեխաների ձերբակալության առաջ ել կանգ չեն առնում: Մոտերս Պետրոշանիում վոստիկանությունը ձերբակալեց 10-ից մինչև 15 տարեկան 20 յերեխաների, «ինտերնացիոնալ» յերգելու պատճառով: Յերեխաներին 3 որ պահել և վայրագաբար ծեծել են վոստիկանական բանտում:

1930 թվի ընթացքում Ռումինիայում սպանվել են 24 ընկերներ, վիրավորված՝ 3959 և ձերբակալված՝ 4656 հոգի: Այս թե բոյարական Ռու ինիայում ինչպիսի միջոցներով են՝ կարգ և կանոն ստեղծում:

Ռումինիայի հարեան Հարավ-Սլավիայում 1929-ի մայիսին սպանվեց կոմկուսի կենտկոմի անդամ ընկեր Դյակովիչը, ոդոստոսին՝ իրենց ռազմական դիրքերում, վոստիկաններից ընդ-

հատակյա տպարանը պաշտպանելիս, ընկան Հարավ-Սլավիայի կոմսոմոլի յերեք գործիչներ—Յանկո Միշիչ և Ռելկին 2 յեղայրյաները:

Իսկ 1930 թվին սպանում են 43 ընկերներին: Խիստ ծեծում՝ 909 և ձերբակալում՝ 1089:

Հարկավոր ե առանձնապես դատել Ֆինլանդիան, վորտեղ վերջերս ֆաշիստներն իրենց լրությամբ գերազանցել են ըսպիտակ տերըորի մյուս բոլոր յերկների իրենց ֆաշիստ բարեկամներին: Նրանք կործանեցին վոչ միայն պրոլետարական և գյուղացիական կազմակերպություններն, այլ նույնիսկ անկուսակցական, կոմկուսինչպատկանող կազմակերպությունները: Նրանք բանված հեղափոխականների հետ վարվում են անորինակ դաժանությամբ և իրենց սեյմի, կոոպերատիվ վարչությունների անհաճո անդամների, վերաբերյալ գործադրում են նոր, վայրենի մի միջոց, նրանց աննկատելի կերպով ԽՍՀՄ ահամանից անցկացնելով: Բայց Ֆինլանդիայում հեղափոխական պայքարը չի հանդարտում, վորի ապացույցներն են 1930 թվի ընթացքում միայն վիրավորված 276 և ձերբակալված 827 հեղափոխականները:

Փոքր ֆաշիստական յերկների ավելի թույլ բուրժուազիան չեր համարձակվի կատարել նման վայրագություններ, յեթե նրան պաշտպան չիհանդիսանային ավելի ուժեղ պետությունները:

Թրանսական, անգլիական և ամերիկյան բուրժուազիան գոռում ե կուլտուրայի մասին, բայց մեծ ճանապարհի ավազակներին արժանի գործեր ե կատարում: Այդպես, Ֆրանսիայում, այդ «գեմոկրատիկ» յերկում, բանվոր դասակարգի լավագույն զեկավարները բանտում են և միայն մի 1930 թվի ընթացքում ձերբակալված են 3484 հոգի:

Այսպես կոչված՝ «կուլտուրական», «գեմոկրատիկ» յերկներում սպիտակ տերըորը գործում ե ավելի հմուտ և միշտ նպատակին ե խփում: 1926 թվի ընդհանուր գործադրություն հետո միանգամից ձերբակալվեցին անգլիական կոմկուսի կենտրոնի համարյա բոլոր անդամները:

«Կուլտուրական» ամերիկյան բուրժուազիան «կուլտուրական կերպով», մաքուր, «առանց արյունի» ելեքտրական աթոռի վրա բոլորովին անմեղ Սակկո և Վանցետտի բանվորների հետ հաշիվ տեսավ, նույն վիճակի յեն սպասում կաստոնի 17 տեքստի բանվորները, վորոնք այժմ ամերիկյան բուրժուազիայի կամքսվ բանտումն են գտնվում, նույնպես և 8 յերիտաստրդ նեզը բանվորներ:

Միայն մի 1930 թվի ընթացքում «աղատ» Ամերիկայում սպանվել են 40 հոգի, վիրավորված են 5812 և ձերբակալված 6400, Այդ փաստերը լավագույն կերպով պարզում են, թե ինչպիսի աղատություն ե տիրում Ամերիկայում:

Հեղափոխական ալիքների վերելքից անհանդստացած, բուրժուազիան, սարսափած հեղափոխության ամենաչնչին նըշաններից, նետվում ե առանց կանգ առնելու նույնիսկ յերեխաների վրա, նրանցից վրեժ առնելու: Այդ ի միջի այլոց, ավելոդ անդամ հաստատում ե այն փաստը, վոր տերը որը վկայում ե վոչ թե բուրժուազիայի ույժը, այլ նրա թուլությունը: Ինչնիվ կարելի յե բացատրել այն փաստը, յերբ, որինակ «աղատ մրանսիսյում, վիրջերս, իր ընկերների մեջ կոմունիստական թերթեր տարածելու համար 12 տարեկան Սալյդար Ռենոն Դուին ուղամական դատարանի կողմից 5 տարվա վիճական բանտի դատապարտվեց: Ինչնիվ կարելի յե բացատրել մի ուրիշ քստմնելի փաստ, յերբ Գերմանիայի «դեմոկրատիկ» կառավարությունն արգելեց խորհրդային պիոներների պատգամավորության գնալ Բերլին, պիոներական համաշխարհային 2-րդ հավաքին մասնակցելու համար: Ինչնիվ կարելի յե բացատրել Ամերիկայում 7 նեզը բանվորների ցմահ թերդարդելությունն ու մահավճիռը, վորոնց մեջ կան 14 տարեկան տղաներ:

Ի՞նչ կարելի յե դրանից հետո սպասել չինական խունխուղներից և սպիտակ ավաղակներից: Զանազան Զան-Կայշիներ և Ֆին-Յու-Սյաններ բանվորների և գյուղացիների հետ վրեժ են լուծում ավելի հասարակ և վոչ սպական վայրագությամբ: Նրանց մոտ չկան ելեքտրական աթոռներ, նրանք

սպիտակ ձեռնոցներ չեն հագնում ելեքտրական հոսանք բաց թողնելու համար, բայց դրա փոխարեն նրանք ունեն վուշի թելից հյուսված թոկ (ուռլ) և նավթ: Կանտոնի փողոցներում նրանք բոնված հեղափոխականներից մի քանիսին թոկերով իրար կապելով, վրաները նավթ եյին ածում և վառում... Մարդկային մարմիններից գոյացած խարույկների լույսի տակ գեներալների բանդան (ավաղակախումբը) և նրա կոնդոնի և Պարեզի, Տոկիոյի և Նյու-յորքի «կուլտուրական» ղեկավարները տունում եյին իրենց հաղթանակը կանտոնի պրոլետարիատի վրա:

Նույնիսկ բուրժուական թերթերն այն ժամանակ զրել եյին. «Կանտոնը դարձել և մեռելների քաղաք: Սպանվածների զիակները տարածված են մայթերի յերկարությամբ»: Բայց այդ կատարվում ե վոչ միայն Զինաստանում: Որինակ, Հընդկաստանում, վերջերս, անդիմական կառավարությունը ապստամբած ցեղերի գյուղերի վրա 70 որդանավերով ամեն որ հազարական ոռւմք նետելով ճնշեց նրանց ապստամբությունը: Գյուղերը վոչնչացան, նրանց բնակչիները՝ կանայք և յերեխաներ՝ կամ սպանվեցին կամ լեռները փախան, վորտեղ ժամանակած են կորստյան, բայց, դրա համար ել անդիմական կամբալիստները տոնում, հրձվում են, վորո կարողանում են անպատճ շարունակել Հնդկաստանի աշխատավոր ժողովրդի կողոպուտը: Անդիմական կապիտալի այդ գործողությունը հընդիկ աշխատավորական զանգվածներին նստեց՝ 546 սպանված, 8669 վիրավորված և մոտ 30 հազար ձերբակալված միայն մի 1630 թվի ընթացքում: Իսկ Ֆրանսիան իր գաղութներում նույն ժամանակամիջոցում սպանել ե 979 հոգի և մահվան ե Դատապարտել Հնդկաչինի հերոսական ապստամբներին: Իսպերիալիստների ոժանդակությամբ, խստագույն վայրագությամբ Զինաստանում մորթոսվում են հարյուր հազարավոր բանվորներ և գյուղացիներ: 1930 թվին Գոմինդանի զինվորականությունը կոտորել է 291.445 հոգի, վիրավորել 62.488, ձերբակալել 101.948: Մոտ անցյալում Զան-Կայշին գլխատեց Զինական կոմկուսակցության գլխավոր քարտուղար ընկեր Սյան-Ջու-Ֆային, Զնայած դրան, չինացի ժողովուրդը ուժեղաց-

նում և իր պայքարը և հեռու չե այն ժամը, յերբ նա բոլոր դահիճներին հաշիվ են ներկայացնելու Խորհրդային Զինաստանի համար տարվող պայքարում ընկած զոհերի համար:

Իսպանիայում և Գերմանիայում սպիտակ տերրորի փառաւերը պարզությամբ ցույց են տալիս, թէ ինչպես պրոկտարիատի հարձակման անցնելու հետ սաստկանում և սպիտակ տերրորը, վորով բուրժուազիան մոտագրվում ե իր անկման ժամը հետաձգելու: Հեղափոխության նախորյակին, 1930 թվին, ամբողջ Իսպանիան յեռում եր դասակարգային կովում: Կարուը (թագավորը) և բուրժուազիան, վախենալով, վոր իշխանությունը կարող ե պրոկտարիատի ձեռքն անցնել նրա վերա ելին թափում իրենց հարվածները: Այդ ժամանակամիջուցում սպանվել են 202, վիրավորվել՝ 4000 և ձերբակալվել 9308 հոգի: Յերբ բուրժուազիային կարոլին վտարելուց հետո հաջողվեց իշխանությունը իր ձեռքն առնել, նա սկսեց լավագույն հեղափոխական բանվորներին և գյուղացիներին, և առաջին հերթին, իհարկ ե, կոմունիստներին ամբողջ խմբերով բանտ հետեւ:

Նույն ե անում նաև գերմանական կառավարությունը՝ հրատարակելով կոմունիստական թերթերի արգելման որենքներ, ձերբակալելով 1930 թվի ընթացքում մոտ 18 հազար մարդ, ծեծելով 10 հազար և հաճախ սպաննով ցույցերում մասնակցող, հաց և աշխատանք պահանջող բանվորներին: Յերբ ցարական գեներալ՝ արյունախում Տրեեպովը հրամայում եր վրոտիկանության, բանվորների դեմ, «գնդակներ չխնայել», այժմ ել նման հրաման ե տալիս պրուսական ներքին գործոց մինիստր սոցիալ-ֆաշիստ Զեվերինը: Նա հրամայում ե. «միացյալ կոուտիկանական ջոկատի ամեն մի հրամանատար կամ ամեն մի անհատ կոուտիկան իրավունք ունի զենքի դիմել... Յես չպիտի մերժեմ իմ պաօպանությունը վոչ մի վոսիկանի, վոր զենք ե ե բանեցրել»:

Հացի. և աշխատանքի փոխարեն՝ գնդակներ չխնայել, ահա բանվոր դասակարգի պահանջներին բուրժուազիայի պատասխանը:

Վորպես արդյունք, ըստ վոչ լիակատար տվյալների, բոլոր կապիտալիստական յերկրներում, 6 տարվա ընթացքում, 1925-ից մինչև 1930-ը սպիտակ տերրորը արտահայտվում է հետևյալ թվերով.

Սպանված և տանջված. 670.901 մարդ

Վիրավորված 388.714 „ „

Զերբակալված 862.563 „ „

Մահվան դատապարտված . 141.253 „ „

Դատապարտված 94.934 „ „

Ընդամենը 2.158.365 „ „

Այս թվերը պետք ե հիշի ամեն մի բանվոր, գյուղացի, բոլորը պետք ե իմանան, վոր բուրժուազիան վերջին 6 տարիների ընթացքում խոշոտել տանջել և բանտերի քարաշեն տոպրակների մեջ ե նետել 2 միլիոնից ավելի մարդ, վորից միայն 1930-ի ընթացքում սպիտակ տերրորը հեղափոխական շարքերից գուրս ե բերել 632.719 մարդ: Այս թե բուրժուազիան ինչ գնով ե իր անկման ժամը հեռացնում և դեռ իր արյունոտ ձեռքերում պահում իշխանությունը:

ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքական բանտարկյաների քանակը կապիտալիստական բոլոր յերկրների բանտերում հաշվվում ե տասնյակ հազարաներով: Վատ անունողը, ծանր աշխատանքը, քաղաքական և քրեական բանտարկյաներով (իքը) հիվանդների և առողջական բանակավորների և փոքրերի ընդհանուր կամերաները, կառ խոնավ և ցուրտ, առանց լույսի և մաքուր ոչի նկուղի փոքրերի իցիկը (օճիոչք), շղթաները, այս ժամանակակից բանտերի պայմանները, վորոնք բաղաքական բանտարկյաներին մատնում են անխուսափելի և դանդաղ մահվան:

Քաղաքական բանտարկյաների հետ հաճախ ավելի խիստ և անխնա յեն վարվում, քան քրեական հանցավորների հետ: Այս աստիճանի յե հասել պան Պիլսուդսկու կառավարությունը, վոր քաղաքական բանտարկյաների համար ընդհանուր քրեական ոեժիմի հաստատման հատուկ որենք հրամարակեց:

Այդպիսով «գեմոկրատական», հանրապետական իշխասանութեանտ ընկնող մեր ընկերները պարտական են պետական բանադրկյալի զգեսաներ կրել (բաղաքական բանարկյալները իրավունք ունելին իրենց սեփական զգեսաները հագնել). ծ. բարգ) ծանր աշխատանք կատարել բանտի վարչապետների հայտնվելուն պես ձգվել ուղիղ կանգնել և պատասխանել նըրանց «զդրավիյա ժելայու» («առողջություն եմ ցանկանում»), կատարել պահանջներ, վորոնք ստորացնում են մարդկային արժանիքն ու պատիվը, ձիշտ ե, լեհական կառավարությունը վորոշել ե ընդդեմ իր «առաքինությունը» և որենքում գլրել ե. «Անհրաժեշտ ե բանտարկյաներին ոժանդակել վոր բարոյական ուսուցման և իրենց դավանանքի կրոնի ուրախությունները ստանան»: Լինել յերկաթե վանդակի հետեւ առանց լուսի և հացի, բայց՝ կրօնի ուրախություններով: Միթե դա լիրը ծաղը ու ծանակ չե հեղափոխության մարտիկների վերաբերյալ Նման աժանադին որենքի դեմ ՄՈՊԻ-ը ոմեր պայքար ե մղում, վորին պիտի միանան բոլոր բանվորներն ու գյուղացիները:

ՄՈՊԻ-ին հաճախ հաջողվում ե բաց անել այն, ինչ կատարվում ե բանտերի հաստ պատերի հետեւում, վոստիկանատներում և ժանդարմական բաժիններում:

Թաղաքական բանտարկյաների տառապանքները վառ նկարագրում ե Գրոդոն բանտից բանվոր լենեվսկին. «Իս հայտարարությունից հետո, թե յես յերբեք չեմ պատկանել վոչ մի կուսակցության, աչքերս կապեցին թաց սրբիչով: Հետո իմ ձեռքերն ու վոտքերը միասին կապելով միջից մի փայտի կտոր անցկացրին, բերանս ել մի լաթի կտոր կոխեցին, վորպեսզի իմ ձայնը վոչ վոք չլիի, հետո ինձ պառկեցրին հատակին և քթածակերս ջուր լցնելով սկսեցին ծեծել: Ինձնից պահանջում եյին, վոր ընդունեմ, թե պատկանում եմ կուսակցության:

Նման փաստերը յեզակի չեն, նըրանց մասին տեղեկացնում են մի շարք յերկրներից: Ամեն տեղ բուրժուազիան դիմում ե ամեն տեսակ միջոցների վոհին հաշմանդամ դարձ-

նելու, նըրանից իրեն հարկավոր ցուցմունքներ ձեռք բերելու, կաշառելու, խարելու, ավելի անկայուններին իր լրտեսը դարձնելու ամենայն ձեր և աղնիվ հեղափոխականներին տանջելու:

Հունգարիայում (Վենգրիայում) ընկեր Սանտոյի և նրաը ընկերների գատավարության ժամանակ բացվեցին բանտարկյալների բողոքների մանրամասնությունները: Ատրճանակները ճակատին բռնած, ստիպել են նըրանց ամբողջ գիշերներ կանգնել մի վոտքի վրա, մինչև արյունախառն միգելը, խըֆել են յերկամունքներին: Հաճախ բանտարկյաներին վատքերից կախելով, խփում են կոնակներին, հետո ստիպում հիգանդ վառքերով պարել:

